

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին բան տարին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ
Մի պատասխան. Նախկին Նոր-Բայազետից. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ. Արտաքին
լուրեր.—ՀՆՈՒՅՏՄԵՐՈՒՆԵՐ.—ԲՈՐՍՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք:

ՎԵՐՋԻՆ ԲԱՆ ՏԱՐԻՆ

Կան անհատներ, որոնք, զուրկ լինելով
անհատական ինքնուրոյնութիւնից, շփուելով
աւելի բարձր, աւելի կազմակերպված բնա-
ւորութիւնների հետ, աւելի քաղաքակրթ
շրջանի հետ,—իրանք թուլանում են, կորց-
նում են իրանց անձնական յատկանիշները,
անպայման խոնարհվում են ուրիշի կամքին,
շրջանի կեանքին, անգոյն են դառնում իս-
պառ կորցնում են իրանց «եզ»։ Կան ընդ-
հակառակն և այնպիսի անհատներ, որոնք
շփուելով իրանցից բարձր մասուր և բարո-
յական զարգացում ունեցողների հետ, աւե-
լի քաղաքակրթ շրջանի հետ,—արթնա-
նում, կատարկագործվում են, աւելի ըն-
դունակ, աւելի ինքնուրոյն են դառնում,
աւելի են զարգացնում իրանց «եզ»։ Այդ
տեսակ տարբեր ներգործութիւն ունի թէ՛ բնա-
ղաքակրթ կեանքը, և թէ՛ համայնարանական
բարձրագոյն ուսումը երիտասարդ սերունդի
վրա։ Ի ընէ ինքնուրոյնութիւնից զուրկ
բնաւորութիւններ, շփուելով աւելի զարգա-
ցած անձնաւորութիւնների, գիտութեան
հոսանքի, քաղաքակրթ շրջանների հետ,
—ստորկար միայն ընդունում են դրսի
ներգործութիւնը, առանց մարտնչել ընդու-
նաճը, իսկ իրանք իսպառ կորցնում են ի-
րանց մէջ եղած անձնական յատկութիւն-
ները վերջին նշյոյնները։ Ընդհակառակն բը-

նաճին ինքնուրոյնութիւն ունեցող բնաւ-
որութիւնները, շփուելով բարոյապէս և մտա-
ւորապէս իրանցից աւելի զարգացած անձ-
նաւորութիւնների կամ շրջանի հետ,—ի-
րանք էլ աւելի զարգանում, ինքնուրոյն են
դառնում, աւելի էլ զարգացնում են իրանց
անհատական բոլոր առանձնայատկութիւն-
ները։

Ինչ որ պատահում է առանձին անհատ-
ների հետ, նոյնը պատահում է և ամբողջ
ազգիի հետ։ Կան ազգեր, կան ցեղեր, ո-
րոնք շփուելով աւելի քաղաքակրթ կեան-
քի հետ,—ընկճվում են քաղաքակրթու-
թեան առջև, կորցնում են իրանց ինքնու-
րոյնութիւնը, առանձնայատկութիւնների
վերջին նշյոյնները, իսպառ կորցնում են ի-
րանց «եզ»։ և ստորկար խոնարհվելով
աւելի բարձր ուժի առջև, լուծվում են
օտար և աւելի զարգացած, քաղաքակրթա-
կան շրջանի մէջ, անմիջապէս ձուլվում են
շրջապատող կեանքի հետ։ Ընդհակառակն
կան ցեղեր, որոնք օտար, աւելի բարձր
լուսաւորութեան հետ շփուելով, անմիջապէս
իրացնում են դրսի քաղաքակրթական կեան-
քի արգասիքները, զոյգութիւն ունեցող նոր
գաղափարներով և լուսաւորութեան ձեռ-
քով ստեղծած բարիքներով լրացնում են
իրանց անձնական առանձնայատկութիւն-
ների հարուստ պաշարը և այդպիսով դառ-
նում են աւելի հանձարեղ, աւելի ընդու-
նակ զարգանալու, առաջադիմելու, մտաւո-
րապէս և բարոյապէս աւելի ինքնուրոյնա-
բար ապրելու։

Այդ տեսակ ցեղերից են, անտարակոյս
և հայոց ցեղը։ Մեր աչքի առջև, վերջին
քսան տարվայ ընթացքում, հայոց ցեղը
շփուելով թէ՛ ռուսաց և թէ՛ արտասահմա-
նեան քաղաքակրթութեան հետ, այդ կարճ
ժամանակամիջոցում յանկարծ արթնացաւ,

նոր կեանք առաւ։ Քաղաքակրթութիւնը,
լուսաւորութիւնը՝ չը սպանեց, չը մեղքեց
հայերի բնածին, թէ՛ և դարերի ընթաց-
քում բնած զրուծեան մէջ եղած բո-
լոր ցեղական ընդունակութիւնները, բայց
ընդհակառակն զարգացրեց այդ բազմակող-
մանի ընդունակութիւնները։ Եւ ահա քսան
տարվայ կարճ ժամանակամիջոցում, հայերը
շփուելով հանրամարդկային քաղաքակրթու-
թեան հետ, մի անգամից յայտնիցան ի-
րանց արտակարգ ընդունակութիւններով
հասարակաց բոլոր ասպարէզներում։ Հայե-
րը տուեցին արտակարգ զօրապետներ, հա-
յերը կարողացան արեւմտեան Եւրոպայի և
Ռուսաստանի համայնարաններում պրօֆէ-
սորներ լինելու, ամբիօնները զրաւել, հայուհիք
փակված ընտանեկան կեանքից դուրս դա-
րով յանկարծ երեւցին եւրոպական համա-
լսարաններում, որպէս ամենաընդունակ ու-
սանողուհիք, հայերը կարճ ժամանակում
մեծ բազմութեամբ տուեցին մեզ ընդունակ
բժիշկներ, արվեստներ, ինժեներներ, գրող-
ներ, վերջապէս հայերից այդ վերջին տա-
րիների ընթացքում սկսում են յայտնիլ
նկարիչներ, երգիչներ ու երգչուհիներ, պիս-
նիսներ ու ջութակահարներ...

Շատ քիչ ազգերին է վիճակված այդ-
քան կարճ ժամանակում քաղաքակրթու-
թեանը յարվելով, այդքան շօշափելի կերպով
և յանկարծ վերածնվել, այդքան կարճ ժա-
մանակամիջոցում այդքան բազմակողմանի
տաղանդներ արտադրել և մի անգամից դրե-
լէ բոլոր ասպարէզներում յայտնիլ...

Անընդունակ անձնաւորութիւն կամ ան-
շարժ, ինքնուրոյնութիւնից զուրկ մի ցեղ
շփուելով համամարդկային քաղաքակրթու-
թեան հետ,—ընկճվում, թուլանում, ան-
հետանում է, կորցնում է իր եղած
առանձնայատկութիւնների վերջին նշյոյ-

նեւն է։ Ընդհակառակն, ընդունակ ան-
հատը, շփուելով բնաւորութեամբ մի աւե-
լի զօրեղ, աւելի կատարեալ անհատի
հետ, կամ ընդունակ ցեղը շփուելով մի
աւելի քաղաքակրթ ցեղի հետ,—աւելի
կրթվում, աւելի զարգանում է, աւելի ըն-
դունակ է դառնում, աւելի զարգացնում է
իր բոլոր բնածին առանձնայատկութիւննե-
րն ու իր ինքնուրոյնութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Մնում է պատասխանել պ. Յովհաննիսեանի
զեկուար և մեզ համար նշանակութիւն ունեցող
մեղադրանքին, որ մեզանից, իբրեւ «Մշակի» թղ-
թակցից, պահանջվում է «Մշակի» գաղափարա-
կից լինել, որ իբր թէ չենք։ Մենք կարևորու-
թիւն չենք դրում ապացուցանել մեր գաղափա-
րակից լինելը «Մշակին», մեր անցեալի վերա-
բերմամբ, որովհետեւ «Մշակի» գաղափարները
տարածել և տուժել եւ ենք այն ժամանակ, երբ
աւելի դժուար էր դրանց համար մաքառել։ Իսկ
եթէ այժմ տարիների փորձը մեզ համոզել է, որ
մարդիկ այն չեն, ինչ որ ցանկանում են երևալ
և այդ պատճառով աւելի զգոյշ կերպով ենք
վերաբերվում դեպի իրողութիւնները—միթէ մե-
ղադրել ենք մենք։ Եւ պարզ կասեմ ձեզ, պ.
Յովհաննիսեան, անցեալում այժմեան ճշտմամբ
բայց ապկար, ողորմելի երիտասարդները չը
կային (գոնէ իմ տեսածների մէջ), անցեալում եւս
գաղափարի մարդիկ էլ աւանում, իսկ այժմ նոյն
անունով շահախնդրութիւն։ Գուք ասում էք, որ
եւ անձնական հաշիւներ ունեւ ձեր протекже-նե-

պակասում է. դրա պատճառը չառ պարզ է. ինքը
ժողովուրդն էլ լաւ հասկանում է, որ ուսումնա-
րան իր նպատակին չէ ծառայում, աշակերտը
աւարտում է դպրոցի ընթացքը և չը գիտէ հայե-
րէն և ռուսերէն լեզուները և կեանքի համար նա
բոլորովին անպատրաստ է դուրս գալիս դպրո-
ցից։

Ինչ վերաբերում է ուսուցչական խմբին, որի
զուրկն է անցած պարոն Զարինեան, բաւակա-
նին կազմակերպված է ու ընտիր ուսուցիչներ
ունի։ Տեսուչը մի ընդ պարոն է և գիտէ իր
մասնագիտութիւնը՝ դասական լեզուները։ Ուսուց-
չական խումբը գրեթէ բաղկացած է համարա-
րանական ոյժերից, բայց չէ նուիրված իր գոր-
ծին. դրա պատճառն է այն հանգամանքը, որ ու-
սուցիչներից շատերը ծառայում են հայոց դպ-
րոցներում, արեւմտեան ուսումնարաններում
տեղ չը լինելու պատճառով։ Ուսուցչական խմբի
մէջ աւելի աչքի են ընկնում պարոն Ներսէսը
Շահաղիզեանը, աւարտած Լադարեան ձեմարեանը,
պ.պ. Տէր-Զաքարեան, Զալինեան։ Պարոն Շահա-
ղիզեան բառի բուն նշանակութեամբ ուսուցիչ
է։ Նրա մաքուր աշխարհաբար լեզուն ու պատ-
մուռ ոգևորիչ ձևը հիացնում են լսողին։

Ուսումնարանը մեռած տպաւորութիւն է թող-
նում մարդու վրա. իւրաքանչիւր դպրոցի յատուկ
զգրգոյն ու հարայնոցը չը կայ այդտեղ, երե-
խաներ աշխուժութիւն չունեն, կարծես թէ
նրանք ֆիզգմտով—մեղմտովի տեսլերամենտ-
ներին պատկանում լինեն։

Ծխական արուեստական դպրոցի ուսումնական
բաժնի մասին եւս անկարող եմ մի խօսք անգամ
արտասանել, թէ և ակնաշիւս քիչ չեն հասել հա-
զար ու մի բաժնաւորներ, լուրեր, ըստ որում եւս
ոչ մի անգամ տալիս չունեցայ դասեր այցելել,
իսկ ինչ վերաբերում է արհեստանոցին, ինչ վրա
չառ հիւսնալի տպաւորութիւն թողեց։ Այդ վեր-
ջինում տեսայ եւրոպական արուեստական դպ-
րոցների սկզբունքն իրագործած։ Այդտեղ ուսու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԳԱՆԻ ԽՈՍԻՐ ՐՈՍՏՈՎԻ ԵՒ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՀԱՅ ԳԱՂԱՎԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

Գաղոցի նպատակը և աւանդելի գիտութիւն-
ները նոյնն են այժմ, ինչ որ առաջ էին։ Միայն
փոխված է վերոյիշեալ նպատակին հասնելու
ձևը, փոխված են վարչութեան կառավարողներն
ու այն անձնաւորութիւնները, որոնք կոչված են
աւանդելի կրթելու, զարգացնելու։ Եթէ մեզ մի
այսպիսի հարց տայինք, արդեօք առաջ էր այդ
հոգեւոր դպրոցն աւելի հասուն աշակերտներ տա-
լիս, թէ այժմ, եւս այդ հարցին կը պատասխա-
նէի. չոչ առաջ, ոչ էլ այժմ։ Գուցէ վերջիննե-
րում աւելի զարգացած դուրս գան դպրոցից,
բայց դա եղած կը լինի նորոգիւ ժամանակակից
կեանքի, որն աւելի բարդ է և որն աւելի շուտ է
հասուցանում մանկան և ոչ չնորիւր դպրոցի։
Քանի որ մի այսպիսի հակամանկավարժական
ժրագիր գոյութիւն ունի, այդ դպրոցի մէջ աշա-
կերտը չէ կարող հասունանալ։ Երեւակայեցէք,
աւանդելի աւարկանների թիւը հասնում է մինչև
40 և խեղճ աշակերտը ինչպէս կարողանայ 6
տարվայ ընթացքում այդ բազմաթիւ գիտութիւն-
ներն իւրացնել և կրթական նշանակութիւն ունե-
նալ։ Մի անքանական երեղոյթ, որը միշտ կը մնայ
անիրագործելի։ Վեց տարվայ ընթացքում հաղի-
թող առարկաները այդ բոլոր գիտութիւնների
մէջ ևս անարկանեցը, ենթադրական (hypothetisch)
գիտութիւնները կարող են սանիկի նոր աճող
կամքը փշոր-փշոր անել և ոչ աճեցնել։ Արժանի
է աւելի դարկ տալ լեզուներին, գրականութեան
և բնական գիտութիւններին։ Օտար լեզուներից
յիշված է միայն գաղղիկերէնը, աւելի լաւ չէր
լինի, որ դրան աւելացնէին գերմաներէնը և թող-
նէին աշակերտին ընտրել այդ երկու լեզուներ-

րի հետ և եթէ ես պահանջեմ, դուք կը բացատրէք: Ինչո՞ւ եմ, պ. Յովհաննիսեան, այդ շը-նորհը մի գլանաք: Իսկ ես իմ կողմից կասեմ, որ տողերիս գրողը հէնց սկզբից դուր չեկաւ «աղ-տիւ» պարոններին, որովհետեւ նրա անցեալը յայտնի էր իբրեւ «Մշակում» անխնայ մերկացնողի գանազան տղեղ արարքներ: Տողերիս գրողը հաճելի չեղաւ «պատուաւոր» պարոն-ներին, որովհետեւ նա միշտ ինքնուրոյնութիւն պահպանեց, խաղալիք չը դառաւ հին գայլերի առաջ, ծուկը. չը գրեց գանազան կուռքերի առաջ, որ իբր թէ պարտաւոր էր անկը մարդկանց կորցրած *престиж*-ը վերականգնեցնելու համար: Տողերիս գրողը ամբողջ տարիներ անձամբ փորձելով մի որոշ խմբի ձգտումները և գործու-նելութեան ձևը՝ եկել է այն եզրակացութեան, թէ խեղճ գրուիւն և ինքնուրոյն մարդը անուշտ կը հալածվի «գողափարի» մարդկանցից, համոզ-վել է, որ այդ խումբը շատ ծարպիկ է թող փչելու մէջ...

Գալով գաղափարը պաշտպանող երիտասարդ-ներին, պէտք է հարցնենք պ. Յովհաննիսեանին — ինչից էք դուք եզրակացնում, որ «Մշակի» գաղափարը մեզ համար էլ սուրբ չէ. բայց այս ևս յայտնի է, որ ամենաբնորոշ զէնքն անգամ նշանակութիւն ունի նրան գործարարը կարողա-ցողի ձեռքում, իսկ անշնորհ մարդու ձեռքում բոլորովին ապարդիւն կը մնայ և նոյն իսկ կա-րող են ձեռքիցը խլել: Շատ երեւոյթներ համոզում են մեզ որ ձեռք «աղտիւ» մարդիկ ձգտում են ոչինչ չարած փառք վայելելու և յարգվելու: Քաւ լիցի-ինձ ասել, որ ձեռք ձանաչած բոլոր երիտասարդ-ներն ևս «գաղափար» յարգող մարդիկ չեն. կան նրանք մէջ մի երկուսը, որոնք թէ և այժմ նախա-պաշարված են տողերիս գրողի դէմ, բայց և այն-պէս ես իմ սրտի խորքում միշտ յարգում եմ նրանց, կատարելապէս համոզված լինելով, որ գուցէ մօտաւոր ապագան աւելի ևս ակնյայտ-նի կերպով պէտք է ապացուցանէ նրանց, թէ ինչպէս իրանք երիտասարդական եռան-դով վառված և կարծելով թէ գաղափարի են ծառայում, ընկել էին շահախնդիր, կեղծաւոր, նեղ մարդկանց ձեռքը և խաղալիք դարձել: Վստահ եմ, որ քննադատական հայեացքի աղղե-րութեան տակ՝ հին գայլերի չինած, թրով կը պ-ցրած պալատները կը փչեն, արտաքին կեղծ-փայլը կը չքանայ և ամենայն ինչ կերեայ իր բնական գոյնով իսկ առայժմ, որպէս զի դուք,

ցանկում են հիւսնադործութիւն, միտադադործու-թիւն ու կոչկալարութիւն: Ծանօթացայ նաև այդ դպրոցի յարգելի հոգաբարձուներին՝ հետ, որոնք հասարակութեան ընտիր անդամներին են: Թէ որքան է աջողութիւն մի այդպիսի հիմնարկութիւն ծխական դպրոցում, մեզ ցոյց է տալիս վերոյի-շեալը. շատ ցանկալի կը լինէր որ ուրիշ քաղաք-ներ էլ հետեւին այդ օրինակին: Ձը մոռանանք նաև յիշել, որ այդ դպրոցի տեսուչն է մեր յար-գելի բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանը:

Բացի ուսումնարաններից կան Կոր-Նախիջևա-նում և այլ ոգտակար հիմնարկութիւններ, ինչպէս, օրինակ, գրադարան, որը յիշուի աննախնայելի դրութեան մէջ է գտնվում. այդ վերջինը հայերէն գրքերից շատ դուրի է, բայց Բաֆթու մի քանի հեղինակութիւններին և մի քանի այլ գրքերից հայերէն չէք գտնի: Այնտեղ կան սակայն վիկտոր-Հիւգօի, Ալֆոնս Դոդէի, Զախեր-Վազգիւի, Եպի-հագէնի, Աուրբախի և այլ օտար գրողների երկա-սիրութիւնները: Հայկական բաժինը թէ որքան է անխնամ թողված, ապացոյց է ինձ հետ պատա-հած մի իրողութիւն: Մէկ անգամ մտայ գրադա-րանը խնդրելու «Մշակի» թերթի անցեալ ապ-րիլայ համարները մի բանասիրականի առթիւ, բայց ոչ թէ միմիայն չը գտայ, այլ ստացայ հե-տեւայ պատասխանը. «Մշակը» չենք պահում, երբ կարողացվում է և վերջացնվում, մենք դէն ենք ձգում:

Կոր-Նախիջևանում կան նաև այլ հիմնարկու-թիւններ, Մարդասիրական — Բարեգործական ըն-կերութիւններ, կանանց բարեգործական ընկերու-թիւն, քաղաքային հիւանդանոց, աղքատաց խնա-մատար ընկերութիւն և այլն: Այդ հիմնարկու-թիւնների մասին կը խօսեմ ես առանձին յօ-դուածներով կարծի ժամանակից յետոյ:

Սուրբ Խաչ վանքը գտնվում է 15—20 վերստ հեռավորութեամբ Կոր-Նախիջևանից: Դա նոր-նախիջևանցիների ու բուստովների սիրած դո-սավայրն է: Կիրակի օրերն ուխտաւորները լցվում

պ. Յովհաննիսեան, չը կարծէք թէ ձեր յօդուածով անպիսի զգայուն լարեր էք շարժել, որ պէտք է խուսափէք ձեր դէմ բանակուելուց, ահա յայտ-նում եմ ձեզ հետեւելու. այն մեղադրանքները ստուգելու համար, որոնց ձեր ձեռքում անխոր-տակելի զէնք էք համարում և իբրեւ ամրակու-վանքով պատասպարված ասպարէզ էք իշխում — քննելու համար, իմ կարծիքով, ամենալաւ միջո-ցը մի բանիմաց մարդ ուղարկելն է, որ երկու կողմի բացատրութիւնները լսելուց և քաղաքի մէջ մարդկանց «աղտութիւնը» ստուգելուց յե-տոյ՝ տար իր եզրակացութիւնը: Տողերիս գրողը այդ միջոցը քանիցս անգամ առաջարկել է, որ, ի հարկէ, չէր անի, եթէ երկնայեւ տեղիք ունենար: Իսկ ձեր յարձակման այլ կէտերի վերաբերմամբ՝ տողերիս գրողը բաց ձակաւորով կանգնած է և պատրաստ է ամենայն կերպ բաւականութիւն տալ, թէ ձեր հարցասիրութեանը և թէ հասարա-կաց դատաստանին: Տողերիս գրողը մի անգամ ընդ միշտ յայտնում է ձեզ ի դիտութիւն, որ շատ ուրախ է մամուլի միջոցով պարզել մի քա-նի կնճառոտ հարցեր, նա առիթ՝ չունի երկնայեւ հասարակաց անողոք դատաստանից, քանի որ իր «հալալ» աշխատանքովն է ապրել և ոչ ուրիշնե-րի արեւն քրտնալորով դառած փողերի վրա է աչք անկել, ստուգարացել, խիղճ ու ազնուութիւն մեռ-րել... Եւ քանի որ դուք, պ. Յովհաննիսեան, խորխորաբար յայտնում էք, թէ գործի *закучи-ли* կողմը ձեզ ծանօթ է, բարեհաճեցէք այդ կախարդական վարագոյրի միայն մի ծայրը բարձ-րացնել և այն ժամանակ մենք անվախ կեր-պով բաց կաննենք ամբողջ վարագոյրը, որի ետև գուցէ թագնված տեսնէք ձեզ համար շատ անխորժ պատկերներ «փառաւոր անցեալ» և «փառաւոր ապագայ» ունեցող անհատների կեան-քից: Իսկ եթէ մինչև այժմ այդ չենք արել, դրա պատճառը ոչ թէ մեր երկնայեւութիւնն է եղել, այլ բանակուիւնների տեղիք չը տալու ցանկութիւ-նը, բայց դուք այնքան զգայուն էք, որ ընդհա-նուր յօդուածներին անգամ սարսափելով թուր-քի «զինված սեօլային» (հաւատա հայոցից) էք գոռում, ձգնելով իմ ձայնը խեղդել ամենահամ-դիւ մեղադրանքով: Ի վերջոյ, պ. Յովհաննիսեան, թող սուրբ ձեզ նկատել և հետեւելու: Իբրեւ ի-րաւարարութեան ուսանողի՝ ձեզ շատ լաւ յայտ-նի է, որ դատաւորը պարտաւոր է առանց կան-խակալ կարծիքների, անաչառ կերպով լսել կող-մերի բացատրութիւնը, մանրամասնորէն քննել

են վանքի պարիսպների մէջ: Յիրաւի որ այդ ուխտաւորների դիրքը շատ հիւսնալի է չնորհիւ գեղեցիկ և վառապատական մեծ այգու: Այդ այգու յաճախողների շրջանը չէ սահմանափակ-ված. բացի հայերից, դուք միշտ կը գտնէք այ-գիում հարկաւոր օտարագրներ. այդ վերջին-ները կոչւում են ուղղակի «Армянский сад»: Այդպիսի ունի և գեղեցիկ բուսիք, որը կապալով է արված:

Վանքի շինութեան, հիմնելու մասին շատ աշ-խատեցի տեղեկութիւններ հաւաքել, բայց իմ աշ-խատանքն ապարդիւն եղաւ, ըստ որում ոչ ոքից մի ճիշդ բան չիմացայ: Եկեղեցու ներսը շատ գե-ղեցիկ դարձաւրված է, մաքուր է, բայց հայկական չէ: Այս վանքը յայտնի է նրանով, որ նախ այս-տեղ է թաղված Միքայէլ Կալանդեան և երկ-րորդ իր բարեկարգ ուսումնարանով, որի շինու-թիւնը մի քանի ամիս քրանից առաջ գոհ գնաց կալակի: Այդ ուսումնարանը լաւ դրութեան մէջ է գտնվում չնորհիւ հայր տեսչի և ուսուցիչների, որոնք բոլորն էլ երիտասարդ ոյժեր են: Այս դպրոցը պահպանվում է վանքի եկամուտներով, որ մի բաւականին մեծ գումարի է հասնում, և Կոր-Նախիջևանի մարդասիրական ընկերութեան օժանդակութեամբ: Աշակերտները հաւաքվում են վանքի շրջակայքում գտնվող գիւղերից և մեծ մա-սամբ ձրի կերակրվում և ուսանում են, բայց օտար չքաւոր հայերից փող են պահանջում, այս դէպ-քում նոր-նախիջևանցիք կրկին ցոյց են տալիս նեղ հայեացքներ, որովհետեւ օտար հայը մի թէ հայ չէ, ինչու չը պէտք է ձրի ընդունել: Եւ զարմանալիս այն է, որ նրանց պահանջած մի չնչին գումար է (50 բուրլի), որ դպրոցն առանց դրան էլ «եղաւ» կարող է գնալ, իսկ մի չունեւոր ընտա-նիքի համար շատ դժուար է 50 բուրլի տարեկան վճարել:

Թէև այդ վանքի զիրքը բաւական անմատչելի է երևում մարդու աւաղանների յարձակումնե-րից և գողութիւնից, բայց մարդասպանութեան

գործը և ապա թէ դատաւիճու կարգալ և ոչ թէ միայն մի կողմին լսել, բացատրողներին անվիճե-լի հեղինակութիւններ համարել, կամաւ կուրա-նալ, ամենախաղաղակ կերպով մոլորվել և ա-րոյրը ոսկու տեղ ընդունելով, մեղադրական վճիռ կայացնել: Շնորհաւորելով ձեր դէրժաւոր փաստա-բանական ասպարէզի վրա, մենք կարծում ենք, որ ձեր բռնած ձեռք ժամանակակից չէ. միայն մի կողմին լսելով վճիռ կայացնելը աւելի յարմար էր թիւրքաց կաղիններին և մի ժամանակ այս կողմերում գոյութիւն ունեցող ուսուցիչ մօլորվ-ներին, որոնք գործը վճում էին այն անձի օգ-տին, որը ձարպիկ կը գտնվէր վաղորօք ներկա-յանալ դատաւորին և համեմէլ նրա հոտոտիլքը: Ձեզ համար պատիւ խնդիր է, որ ձեր «մատնա-ցոյց արած» անձինքը լինեն «рыцари безъ стра-ха и упрека», բայց եթէ այդպիսիք չեն, մի թէ մենք ենք մեղաւորը: Այլի հակը Վալիկ ինչի էք պահանջում... Կարող ենք հաւատացնել, որ դուք խաբված էք, ձեզ մոլորեցրել են, մանա-ւանդ որ դուք ևս դժգոհութեան առիթ էք ունե-ցել «հոգաբարձական իրաւունք» անունով մը-կրտած հարցի մէջ, մի քանի նախադէր ի չեք դարձած լինելու առիթով: Իսկ «Մշակին» ան-կեղծորէն յարգելու վերաբերութեամբ պարտք ենք համարում յայտնել պ. Յովհաննիսեանին, որ տարիներ ընթացքում գուցէ մենք ևս առիթ ենք ունեցել դժգոհ լինելու «Մշակի» այս կամ այն աշխատակցից, բայց մենք այդ պատճառով երբեք մեր համակրութիւնը պակասեցրած չենք զեպի «Մշակը» և այդ լրագիրը ստացողներին չենք հարկադրած նրա փոխարէն ստանալ մի այլ թերթ, որ «Մշակին» հակառակ ուղղութիւն ունի և այդ նրա համար, որ այդ բուրլին խռովել էինք... Վերջացնելով մեր յօդուածը, այս ևս կասենք պ. Յովհաննիսեանին, որ կեղծանուն տակ մտնելով միշտ երկնայեւութիւնն չէ ցոյց տա-լիս, այլ կան շատ անձնաւորութիւններ, որոնք համոզված են, թէ յօդուածագիրը գրելու է մի-այն իր միտքը տարածելու համար և ոչ թէ ա-նունը փայցնելու: Մնում է պ. Յովհաննիսեան-ցին անուն առ անուն յիշել իր հակառակորդ մարդկանց և նրանց, ըստ իր կարծեաց, տղեղ վարմունքը և այն ժամանակ կը ստանայ ցանկա-ցած պատասխանը: Նմանապէս նրան խիստ լաւ յայտնի է, որ տողերիս գրողը մի հարարակ մահ-կանացու է, իսկ եթէ պ. Յովհաննիսեանին դուք չենք եկել հայոց լեզուի ուսուցիչներ ու աւագու-

մի քանի դէպքեր այդտեղ տեղի են ունեցել. այժ-ման վանահօր երկու նախորդներին այդտեղ են սպանել. շատ հեռու չէ այն ժամանակը, երբ կովկասեան հայոց թերթերը լուր տուին, թէ Սուրբ Խաչ վանքի վանահայր Աթաւ վարդապե-տին շարագործները մօրթել են: Այդ գործը եր-կար չը մնաց միմիայն քօղով ծածկված, յայտն-վեց, որ վանահօր սպանողը մի հիւսնագործ է ե-ղել, որը ցերեկով եկել է վանահօր ննջարանի պատուհանների կտրած ապակիների տեղը նո-րը գցելու, ծածուկ անտեղով սննեակի չորս կողմերը, պատահանը բաց է թողնում ու գիշերը դրսից բարձրանում:

Ձը մոռանանք նաև մի քանի խօսք նուիրել Կոր-Նախիջևանի շրջակայքում գտնվող հայ գիւ-ղերին: Այդ գիւղերից նշանաւորներն են Ծ, որոնք գտնվում են քաղաքի հիւսիսային կողմում մինչև 20 վերստ հեռավորութեամբ: Հինգ գիւղերի հայ բնակիչների թիւն է 5000:

Այդ հայ ժողովրդի մէջ ևս մուտ է գործել կեղծ քաղաքակրթութիւնը, բայց այնու ամենայնիւ շատ դէպքերում ամուր պահել են իրանց նահա-պետական սովորութիւններն ու կանքը: Յիշեմ մի դէպք, որ ես ակնատես եմ եղել, այն է հարսանիք. իմ զարմանքին չափ չը կար, տեսնե-լով նրանց մէջ նոյն հայկական սովորութիւննե-րը, նոյն դուրսալին ու նաղարաչին, բայց աւելի փոքր դուրսանելով ու թմբուկներով, *) գրեթէ այն պարերը, փոքր ինչ փոփոխած, ուսուցանել աղեկցութեան տակ ընկած:

Գիւղացիների գլխաւոր զբաղմունքն է երկրա-գործութիւն և անասնապահութիւն: Այս վերջինը Կոր-Նախիջևանի գիւղերում նոյն պատկերն է ներկայացնում, ինչ որ մեր գիւղերում. այստեղ աւելի անասնապահներ են, քան անասնապահ: Նրանք չունեն մշտական մեծ հօտեր և չեն էլ

*) Թիֆլիսիւն աւելի մեծ է, բայց Նրանի նա-հանգում նաղարանները շատ մեծ են և երաժշտու-թիւնը սաստիկ խլացնող է:

սուցիչները, թող իր անձնական հաշիւները մաք-րելու համար մեզ չը դիմէ. մանաւանդ որ ինքը ընդհանուր յօդուած գրողներին պատկերիւնաւ է անուանում, ուրիշներին մեղադրում է դժնատա-կից յարձակվելու մէջ, բայց ինքը նմանապէս «դժնատակից» է յարձակվում: Աւ այժմ այս- ջան:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Հովտեմերի 16-ին
Երկու շաբաթից աւելի շարունակ տեղացող անձրևները ահագին վնաս հասցրին մեր գաւա-ռին. խեղճ գիւղացիք նոր-նոր սկսել էին հացա-հատիկների ծեծը-կալը, դեռ իրանց համար ու-տելու ցորեն չէին հանել, որ անձրևը բռնեց և գործը դադարեց. շատ կարեւոր էլ թէ դիզած և թէ փռած քել աչքը նորից ծիլ արձակեց. առ-հասարակ անձրևները խնորհացին, փափկացրին, կամ ինչպէս տեղացիք ասում են՝ աճ կացրին հացահատիկները: Սյժմ սկսել է երկինքը բաց ա-նել իր երկու, չուկալում կշեռքի տակ ալիւրը հիմա ծախվում է լիտրը (12 ֆունտը) 18 կօպ, այն ինչ անձրևի ժամանակ ծախվում էր 23—26 կօպէկ: Գիւղացիք սկսել են բերել վաճառելու իրանց բերքերը. կաղամբ, բողբոջ, կարսօֆիլ, ճա-կնդեղ, գաղար և այլն:

Տեղիս փոքր երեխաների մէջ սաստիկ տարած-ված է «հագ» անունով հիւանդութիւնը. մինչև 8—10 տարեկանները հազում են, բժիշկ չը կա, գաւառական բժիշկը մեծ մասամբ գիւղերումն է լինում գիւղերից բաց անելու համար, իսկ քաղա-քային բժիշկ ունենալու մասին ոչ ոք չէ մտա-ծում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի և Անդրկովկասի շատ քաղաքներից և գիւղերից անդադար մեղ գրում են, որ հայոց այս կամ այն դպրոցում ուսուցիչները ամիսներով ի-րանց ուժնիկը չեն ստանում: Անդադար մի և նոյն գանազաններ լսելով, մենք մեր կարողութեան չափ տուպրում ենք այդ ցաւալի լուրերը մեր լրագրի էջերում: Սակայն ինչ օգուտ. մի թէ հայերը գնա-հատում են իրանց մանուկները առաջադիմութեան համար հօգ տանող, գիշեր ցերեկ աշխատող, դըր-րօցների համար հանգանակութիւններ անող դպրո-

մտածում մեծացնելու և բազմացնելու մասին: Ահաւասիկ այդ անասնապահութիւնը ինչպէս է Գիւղացիները ճանապարհորդում են գաւառից Կուրանի նահանգը, ահագին քանակութեամբ մինչև անգամ հազարներով ոչխարներ են գնում և նրանք իրանք չեն բերում հետները, այլ ամա-ռը տալիս են հովիւներին, որոնք մինչև ձմեռվա մուտքը արածացնում են, և ապա Կոր-Նախիջ-ւան են բերում և այդտեղ իւղ հալեցնող գործ-րանքների համար մօրթում են ամբողջ հօտը: Ի-րաքանչիւր ոչխարի մի մանր անդամ անպէտք մնում իւղը ծախում են գործարանների վրա, րօնք էլ ժամանակին տակաւների մէջ են թ-նում, միւսը ծախում են մսավաճառների վր-մօրթին հասցնում են Ռուսաստանի կա-ղործներին, բուրդն էլ յանձնում են բրդավաճ-նեղին, իսկ մնացած՝ ջիւղերը, աղիքները աղ-են փոքր տակաւների մէջ և ուղարկում Եւրոպա, ուր դոցանից պատրաստում են լարեր ջուրթի-ների համար: Միայն ուկրաւներն է, որ դէ-ն ածում: Գուցէ դրանք էլ անպէտք չը մնան, եթէ գործ ունենային մեր այդ հայ գիւղացիները բուն եւրօպացի գործարանատէրերի հետ: Գիւ-ղացիների մի մասը պարապում է երկրագործու-թեամբ, թէ և չը կան Երկալի և Կրկի պողաքեր հողերը, սակայն գիւղերի բնակիչները չեն զլա-նում իրանց ջանքը դնել հողը մշակելու համար: որը և վարձատրվում է բերքով: Հայ գիւղացիներ ի անխնայ ջանք թափելն է պատճառը, որ մա-կուկան համար հողը դեռեւտներ արժէ 60-ից մինչև 80 բուրլի:

Վերջացնելով յօդուածս, թող եմ տալիս ինձ յիշել, որ կարճ ժամանակից յետոյ լույս կը տես-նեն իմ խոստացած յօդուածները նոր-նախիջ-ւանցիների բարեգործական, աղքատաց խնամա-տարութիւնների ընկերութիւններին, քաղաքային հիւանդանոցի և այլ հիմնարկութիւններին մասին:

Յ. Բարխուդարեան

ցի օգտին թափանցան հերկայացուցիչ տուող ուսուցիչներին հերոսական ջանքերը: Եւ ահա այդ քաղաքի համար հայ ուսուցիչը այն վարձատրութիւն է ստանում, որ իր անշնչան տարեկան ուսուցիչին էլ չէ կարողանում ամսէ ամիս կանոնաւոր կերպով ստանալ:

«Տարազ» շաբաթաթերթը Գանձակից տեղեկութիւն է ստացել, որ Գանձակ գաւառի բերքը որից օր աւելի մեծ քանակութեամբ է արտահանուելով դէպի Ռուսիոյ երկրները: Գինին նոր նոր շուկաներ է գտնուել, իսկ այդտեղի խաղողը այժմ հասնում է նոյն իսկ Պետերբուրգ: Արտահանում են այժմ մեծ քանակութեամբ նոյն իսկ կանաչեղէնը և ծաղիկները: Այդ վերջինները մասնաւոր Բաքու են արտահանւում:

ՂԱԼԱԲԻՑ մեզ գրում են. «Մեղանում խանութները սկսել են կիրակի օրերին փակել, սակայն մինչև ճաշը միայն: Հէնց որ ժամի մէկն է լինում, անմիջապէս բաց են անում խանութները և խեղճ գործակատները դարձեալ հանգիստ չունեն կիրակի օրերը»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի «մշտան» ասված հրապարակում գարնան սկզբից մի ծածկով (HABEAT) է շինվում՝ բաւարարելու միւս բերքերի համար, բայց մի ամսից աւելի է, ինչ շինութիւնը դադարեցրած է, որովհետև կարծում են որ շինութիւնը անկանոն կերպով է կառուցւում:

ԷՃՄԻԱՆԻՑ մեզ գրում են. «Գէորգեան ձեռնարանում շարունակվում է սովորական ուսումնական կենտրոնը: Այս տարի մեր ձեռնարանական հանդէսներն աւելի չքեղ է հաճելի էին, որովհետև առ այդ հանդէսներին մասնակցում էր և երաժշտութիւնը»:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Այստեղ անասունների մէջ ժանտախտ է երևացել. անասնաբույժ չունենալ գաւառում: Միայն սուրբ մասնիկներ են տանում անասունների մէջ և ժողովուրդը մատաղներ է անում»:

ԲԱՅՈՒՄԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Այս օրերս հայ թատերասերների խումբը ներկայացում տուեց յօգուտ Բարեգործական ընկերութեան: Խաղացին «Կախարդված պրինց» կոմիդիան և «Եփօր վարժապետ» փոքրիկը: Մուտքը 500 ռուբլուց աւելի էր: Բաւական գեղեցիկ կերպով կատարեցին իրանց դերերը՝ օրերը կարիւսանաց և փրկին Մարտիկանց»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ մինչև այժմ դեռ են բացված չեն Երևանի թեմի Բաշիշիյան, Բաղդասարի և Դաւաթու գիւղերի միջնաբերդը: Պակաս են ուսուցիչները:

Երևանից, հոկտեմբերի 13-ից մեզ գրում են, որ այդտեղ եղանակը հրաշալի է, բերքն էլ խիստ շատ է և կենսական պիտուքները շատ է ժան են:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Քանի մի օր առաջ Երևանի քաղաքային դուման որոշեց բանալ մի հիւանդանոց սիֆիլիսով հիւանդացող կանանց համար, երեք մահճակալներով»:

ԴԻՐԱԲԵՆԻՑ մեզ գրում են. «Գերբեշտի հայոց եկեղեցու երեցփոխ Գէորգ Մէլիք-Շահնազարեան զե-Շապուր, չը կարողանալով դանաղան պատճառներով շարունակել իր պաշտօնի վարելը, այս օրերս հրաժարական է տուել երեցփոխի պաշտօնից»:

ԹԻՖԼԻՍԻՑ ստացված Կ. Պոլսի հայոց լրատվութեան կարգում ենք հետեւեալը. «Երեկի Պաշտօնական օրագիրը» կը հաղորդէ թէ՛ վեհ. սովբանը շնորհած է 5-րդ կարգի Մէճիմի Թիֆլիսի «Արձագանք» թերթի արտոնատիրով, կայս. կառավարութեան բարեացակամ ըլլալուն համար: «Արեւելք» հաղորդելով այս լուրը, կը ծանուցանէ թէ՛ «Արձագանք» շաբաթաթերթի տէր և տնօրէն պ. Արզար Գովհաննիսեան իւր թէ՛ ներկայ և թէ՛ նախորդ պարբերական հրատարակութիւններուն մէջ միշտ Օսմանեան կայսերական կառավարութեան նկատմամբ բարեացակամ օգի մը ցոյց տալիս զատ, ամենալաւ յարաբերութիւններ ունեցած է Թիֆլիսի Օսմ. հրապարտի հետ»:

ԲՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ ուղարկված է հետեւեալ նամակը տպագրելու համար. «Այստեղ դեռ ևս անցեալ տարին ուղարկված էր պ. Կ. Եղորտեանի բառարանի ստորագրութեան թերթը տեղական հայոց ուսումնարանի աւագ ուսուցիչին: Ստորագրութիւնը հաւաքվեց, կանխիկ փողերը վճարվեցան ուսուցիչ պ. Գ. Խիթարեանին, սակայն մինչև օրս բառարանի օրինակները դեռ ևս չեն ստացված»:

Թիֆլիսում մեծ քանակութեամբ տարածված են հարկեր լուրջ իրանց կեղծ թղթադրամներ: Ասում են, որ այնպիսի նմանութեամբ են չինված այդ կեղծ թղթադրամները, որ իսկականից մեծ դժուարութեամբ են զանազանվում:

Թիֆլիսի պոլիցիական ծառաները շատ անտարբեր են դէպի իրանց պարտաւորութիւնները և փողոցներում անկարգութիւն անողներին միշտ խոյս են տալիս, փոխանակ նրանց խաղաղացեալ: Օրինակ, այս օրերս քաղաքի մի փողոցում կանգնաւորներով բռնված մի սալ դիպաւ քաղաքից վերադարձող զինուորական սայրերին և փշուրեց, իսկ սայրապանը զանախոժկեց: զինուորական հարգած սայրապաններից և պոլիցիական ծառայողը միայն այն ժամանակ յայնչեց, երբ զինուորացի իրանց սայրերով արդէն անհետացել էին: Երկաթուղու կայարանի մօտ այս օրերս կառուով հասնում են մի քանի մարդիկ, որոնք թէ՛ հրաժարվում են կառապանին վճարելուց և թէ՛ կառապանի քիթն ու պոռնուրը վարդում են և այդ դէպքումն էլ ոստիկանական ծառայողներ չեն յայնչում և զրանց փոխարէն չարագործներին երկաթուղու ժանդարմներն են կալանաւորում և յանձնում ոստիկանութեան: Բացի դրանից քաղաքի փողոցներում շատ անախորժ դէպքեր են պատահում, որոնցից ուստիկանական ստորին պաշտօնականները շատ անգամ խոյս են տալիս:

Ամսիս 17-ին, Անդրկովկասեան երկաթուղու մարդատար գնացքով Թիֆլիս հասաւ Թէհրանի անդլիական նոր նշանակված դեսպան պ. Լասսէլ: Նրա հետ միասին ուղևորվում են Պարսկաստան անցրկական զինուորական գործակալ պ. Թոմաս Գորդոն և դեսպանի քարտուղարը:

Ամսիս 17-ին, ռուսաց Պետրո-Պաւլէ զերկզմանատան մօտ մի հաւաքարցի ջահիլ օրերը, նըկատելով, որ անդրկովկասեան երկաթուղու ապրանքատար գնացքը դալիս է, պառկեց երկաթուղու դժի մօտ և պարանոցը դրեց ընկալ վրա՝ անձնասպանութիւն գործելու դիտաւորութեամբ: Այդ միջոցին անցնող մի զինուոր նկատելով դժի մօտ պառկած աղվան, անմիջապէս վազում է և անձնասպանին յետ քաշելով երկաթուղու գծից, փրկում է նրա կենցիկը: Դէպի անձնասպանութիւն զրգող պատճառները յայտնի չեն:

Վրաստանի քաղաքային տեղերից հաղորդում են «Իւլիքիա» լրագրին, որ 18 տարեկա միջոցում խաղողի այնքան շատ բերք չեն տեսել, ինչքան այժմ է: Նոյնպէս շատ առատ է հացը: Խաղողը այնքան շատ է, որ այգետիրերը գինի ածելու համար տեղ չունեն: Գինու (18 թունգի) կերպով ընկել է: Մի կ օ կ ա (գինու) գինին, որ առաջ ծախվում էր 7-8 ռուբլով, այժմ 3-4 ռուբլով չեն առնում, չը նայելով որ այս տարեկա գինին իր տեսակով անցեալ տարվանից բարձր է: Բացի հացը և գինին, չափազանց առատ են և կաղամբը և այլ բուսեղէններ, սակայն առնող չը կայ:

Թիֆլիսեանց մի հայ երիտասարդ խնդրում է մեզ յայտնել, որ թարգմանում է ռուսերէն լեզուով «Էլեկտրա» վերնագրով Գրիգոր Արծրունու վէպը և որովհետև թարգմանութիւնը գրեթէ պարտաւոր է արդէն, նա խնդրում է, որ այլ ևս ոչ ոք չը ձեռնարկի նոյն վէպի թարգմանութեան:

Կիրակի, հոկտեմբերի 20-ին, ռուս դրամատիկական խումբը, Թիֆլիսի քաղաքային թատրոնում, ներկայացրեց Վլադիմիր «Преступница» դրաման, 5 գործողութեամբ և «Помолвка въ галерной гавани» փոքրիկ: Յիշալ դրաման բնական յարմարութիւն և հոգեբանական արժանաւորութիւններ ունենալով, աւելորդ չէր լինի ծանօթացնել մի քանի բաներով դրա բովանդակութեան հետ:

Հրաժարական տուած գնեւորալ Չիխմարեւ ունի Լիդիակա անունով մի գեղեցիկ, վառվուռ և թեթեամիտ աղջիկ, որը սիրահարվելով գերմանական ազգանուն կրող Փօն-Շլիստ երիտասարդ փաստաբանի վրա, ոչ ոքի խորհրդին չը լսելով, ամուսնանում է նրա հետ: Փաստաբանը, որը չէ սիրում Լիդիակային, բայց պատկուտ է նրա հետ աղջկայ հարուստ օժիտը ստանալու նպատակով, դեռ ուսանողութեան ժամանակից մի սիրուհի ունի, որին իր ազգականուհու անուն տակ բնակեցնում է իր տանը: Լիդիակայի հօր, գնեւորալ Չիխմարեւի գործերը վատ են գնում, և նա չէ կարողանում խոստացած օժիտը տալ իր փեսային: Ահա այդ բոլորից սկսվում է դժոխային կենցաղ Լիդիակայի համար, որին Փօն-Շլիստ հայհոյում, տանջում և հալածում է: Փաստաբանը իր յանցանքների վրա աւելացնում է և մի քրեական դրոժ, այն է կեղծ մուհնակ է շինում, որի համար նա պէտք է Սիբիր քաղաքով: Չը նայելով երիտասարդ փաստաբանի կեղտոտ անցեալին և յանցաւոր ներկային, Լիդիակա, ականջ չը դնելով իր մօր թախանձանքներին, ցանկութիւն է յայտնում իր մարդու հետ գնալ Սիբիր: Այն ժամանակ Լիդիակայի մայրը, որը անասման կերպով սիրում է իր աղջկան, դիմում է իր փեսային և աղաչում է նրան բնալ իր աղջկայ աչքերը չէ սրբել նրան, ու համոզել նրան հրաժարվել իր մտադրութիւնից: Փաստաբանը մերժում է Լիդիակայի մօր խնդրերը, և ահա մայրը, տեսնելով իր աղջկայ անխել և կորուստը, ինքնամոռացութեան մէջ ատրճանակով տեղն ու տեղը սպանում է իր փեսային: Այդ երեկոյ ներկայացումը այնքան աջող էր, զերասանները և դերասանուհիները այնքան լաւ էին կատարում իրանց դերերը, որ աւելին պահանջել անկարելի էր: Մանաւանդ մեծ աջողութիւն ունեցան տ. Տօկարիւս և պ. Վօլիսովսկի: Վօլիսովսկի ծիծաղաղալարժ, բուն ռուսական կենցիցի վերցրած մի պատկեր էր, թէ որպէս ստորին դասի ժողովուրդը նշանդիք կամ հարսանիքէ անում, հրախրած ունենալով մի գնեւորալ: Այդպիսի հարսանիքները անուանվում են ռուսաց մէջ «свадьба съ генераломъ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԻՐ

«Daily Telegraph» լրագիրը Կ. Պոլսից ստացված մի հեռագրի հիման վրա նախազուշակում է, որ եթէ Անգլիայում կառավարութիւնը փոխվի, սուլթանը անյապաղ հերթական հարցերի թուում կը դնէ անգլիական զօրքերը Եգիպտոսից հեռացնելը, և Ռուսաստանն ու Ֆրանսիան ևս կը շտապեն այդ հարցից օգուտ քաղել: Անգլիայի աղջեցութեան դէմ մաքառելու: Կ. Պոլսում մինչև այժմ նրանց դիմադրում էր մեծ ճարպիկութեամբ և եռանդով անգլիական դեսպանը:

Եւրոպայի պատմաբանութեան մասին «Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ այդ պատմաբանութիւնը իր գաղափրակներին հասաւ: Ամեն օր զօրքեր են ուղարկվում, որոնց տեղափոխելու համար կառավարութիւնը մի քանի ռոբեռներ է վարձել: Ամէշ-Ֆլիշ-Ֆաշան, 7-րդ զօրքաժմի հրամանատարը, հասել է Սանա, որը պատմաբանական նշանակի կենտրոնն է: Շատ են վախենում Բէնի-Սախար և Հուսէյն ցեղերի ընդհանրութիւնից:

«Standard» լրագրի Հոսթի թղթակիցը հաղորդում է, որ հոկտեմբերի 2-ի (նոր տոմարով) անցքերից յետոյ պապը երեք անգամ հրաւիրեց կարդնալների ժողով, ուր ընտրութեան ենթարկվեցան հետեւեալ երեք հարցերը. 1) Ի նկատի ունենալով յեղափոխական զգացմունքների զարթոյնը և դահի դէմ՝ արդեօք չէ հասել ժամանակ, որ պապը հեռանալ Հոսթից. 2) արդեօք յարմար կը լինի ապագայ կոնկլավը (կարդնալների ժողով) Հոսթի հրաւիրել. 3) յամենայն դէպս արդեօք չը պէտք է մի կերպ հաշտութիւն կապացնել վատիկանի և իտալական կառավարութեան մէջ: Այդ երեք հարցերի վերաբերմամբ դեռ ևս վերջնական լինել չը կայացաւ:

Եւրոպական մամուլը ուղադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ գրեթէ ամբողջ անգլիական նաւատորմը, որը գտնվում էր մինչև այժմ Միջերկրական ծովում, այժմ կենտրոնացած է Արքիպելագոսի շրջանում:

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք. «Մասնաւոր հեռագրի մը համեմատ կը ծանուցվի թէ Եւրոպայի պատմաբան ցեղերը սկսած են հաղանդվել»:

Կարդում ենք Կ. Պոլսի հայոց լրագիրներում հետեւեալը. «Կարբինի զօրաբանակին ընդհանուր հրամանատար Մեհմէտ Զեքի փաշան» Պալատեւի քիւրդ հեծելազօրքը կազմակերպելէ յետոյ, գնացել է Հէքեարի (Վանի գաւառի մէջ) հոն տեղի քիւրդ ցեղերն ալ կազմակերպելու համար»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: Երէկ, Նոյաց կայսերական Մեծութիւններին և Օգոստոսիական ընտանիքի հրաշալի փրկութեան երրորդ տարեդարձին եկեղեցիներում զոհացողական մաղթանքներ կատարվեցան. մանաւանդ հանդիսաւոր էր ժամասացութիւնը իսկելեան մայր-տաճարում, որ կատարվեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչի, մինիստրների, Բարձրագոյն Պալատի բարձրաստիճան պաշտօնեաների և զենքերաւորների ներկայութեամբ: Ռուսաստանին միշտ համակրող ամերիկացիների մէջ հանգանակութիւն է սկսված սովեյնները օգտին: Հանգանակութիւնը արդէն ծածկված է 100,000 ստորագրութիւններով: Դիտաւորութիւն կայ հացահատիկներ զբնդել, զլիւսաւորապէս համար և առանձնապէս վարձած չոգնեալութիւնը հաց ուղարկել Ռուսաստան: Լուր է տարածվել, որ Ֆրանսիայում ևս ստորագրութիւն է բացվում Ռուսաստանի սովեյնների օգտին:

ԼՕՆԳՈՆ, 18 հոկտեմբերի: «Standard» լրագիրը առաջարկում է Ֆօն Կալմը Լոնդոնում Ռուսաստանի կարիքները թեթեամբ համար: Հաւատարմութեամբ են, որ Ֆոնը կը գտնվի մի առանձին մասնագործի հակողութեան տակ, որի նախագահը կը լինի Մեծ Իշխանուհի Մարիա Ալեքսանդրովնա Էդինբուրգեան դքսուհին:

ԲՐԵՍԼ, 18 հոկտեմբերի: «Димитрий Донской» նաւի հրամանատարը այս առաւօտ այցելեց տեղական իշխանութիւններին: Լիցեճի աշակերտների պատգամաւորութիւնը մատուցեց նրան բրօնզայ մի պատկեր «Quand on voudra» խորագրով: Այդ ֆիգուրը ներկայացնում է մի ֆրանսիական օֆիցեր, որը մի ձեռքում բռնած ունի զրօշակ, իսկ միւսում—տուր: Մի և նոյն ժամանակ լիցեիստներից մէկը ֆրանս-ռուսական դաշնակցութեան մասին մի ճառ արտասանեց:

ԿՕՊԵՆՀԱՅԵՆ, 19 հոկտեմբերի: Վերջին կարգադրութիւնների համեմատ, կայսերական ընտանիքը վաղը ճանապարհ կընկնի դէպի Ֆրէդէրիցիա, ուր ցամաքով ճանապարհը շարունակելու համար ուղարկված է Կայսերական գնացքը:

ԲԵՐԼԻՆ, 19 հոկտեմբերի: Յունաց արքայական զոյգը այսօր ժամանեց Լիւբեկ, որտեղից իսկոյն և եթ ճանապարհ ընկաւ դէպի Բիւխին:

ՊԱՐԻՉ, 19 հոկտեմբերի: Բրիտանացի հաղորդում են երկվան թիւց, որ ռուսաց նաւերի հրամանատարները ստացան ծաղիկների զամբիւլներ ժէրվէ ծովապետից: Այլ իշած ռուս նաւատիրներին դիմաւորեցին օւլաքաններով: Ի պատիւ ռուս և ֆրանսիական նաւատորմերի օֆիցերներին կազմած բանկէտը փառաւորապէս աջողվեց: Նաւահանգստում օֆիցերներին դիմաւորեցին հասարակական վարչութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7 ժամին, վերջացաւ 1 ժամին: Ռուսաց օֆիցերներից իւրաքանչիւրը նստած էր ֆրանսիական օֆիցերի և հասարակական վարչութեան անդամի մէջ: տեղը: Հաւեր խօսեցին՝ քաղաքագլուխը, ծովապետ Ժերվէ, հիւպատոս Կերրաս և նրա որդին: Քաղաքագլուխը, ողջունելով կրօնատեսան հիւրերին, մասնացոյց արեց Ֆրանսիան և Ռուսաստանը միացնող համակցութեան մի քանի անդամները, մի և նոյն ժամանակ հասարակութիւնը նրանց աղմկալի կերպով ողջունեց: Բանկէտը սկսվելով 7

Ջարկեց կարնոսի և Ջրանսխայի կենացը. հիւպատոսի որդին յիշեց իր ճառի մէջ նաւարկնեան կռիւր: Մի և նոյն ժամանակ Ֆրանսիական ունաւորօֆիլեքները պունջ սարքեցին ի պատիւ ուսուսնաւորօֆիլեքներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Թաղաւոր կայսրը, ընդունելով զեկուցումը, որ կայսրուհու Մարիայի հիմնարկութիւնները վարչութեան գործերում թաղաւոր կայսրուհու բարեգործական մասնակցութեան 25-ամեակը լրանում է հոկտեմբերին, չնորհեց Նորին Մեծութեան անկողնի ծառայութեան Մարիամեան 1-ին աստիճանի չքանչանք 25-ամեակի համար: Նոյն կայսրական Մեծութեան ներքին կոպէնհագէնից Օգոստափառ. երեխանց հետ Գանցիզ գնալը հինգշաբթի չը կայացաւ, անբարեկաջող եղանակի պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐԱՍ.

Հոկտեմբերի 18-ին

Ընդունի վրա	10 ֆունտ արծէ . .	96 ր. 80 Կ.
Բերլինի վրա	100 մարկ . . .	47 > 50 >
Փարիզի վրա	100 ֆրանկ . . .	38 > 25 >
Ոսկի . . .	արծէ . . .	7 > 74 >
Մաքապին կուպոններ	. . .	155 > — >
Արծաթ . . .	. . .	1 > 14 >
Բորսային գիւղականներ	. . .	5 3/4 > 8 >
Պետ. բանկի 5 % տոմս	1 շրջանի . .	101 > — >
. . .	2-րդ . . .	100 > — >

— — — — 3-րդ — — — —	— — — —	— — — —
— — — — 4-րդ — — — —	— — — —	— — — —
— — — — 5-րդ — — — —	— — — —	— — — —
— — — — 6-րդ — — — —	101 — — — —	75 — — — —
60% ոսկեայ բէնտա	158 — — — —	— — — —
40% ոսկեայ փոխառութիւն	— — — —	— — — —
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— — — —	— — — —
— — — — 2-րդ — — — —	99 — — — —	37 — — — —
— — — — 3-րդ — — — —	99 — — — —	62 — — — —
Ներքին 5% առաջին փոխառութիւն	236 — — — —	— — — —
— — — — երկրորդ — — — —	216 — — — —	— — — —
Պետական. երկաթուղային բէնտա .	101 — — — —	50 — — — —
5 1/2% բէնտա	— — — —	— — — —
40% ներքին փոխառութիւն	94 — — — —	25 — — — —
50% գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի	101 — — — —	— — — —
Աղ. կալ. բանկի խաղարկութեան	— — — —	— — — —
գրաւ. թղթ. — — — —	207 — — — —	— — — —
5 1/2% վրայակ. գիւղ. հող. բանկի.	104 — — — —	50 — — — —
4 1/2% գրաւական թղթեր կալուած.	— — — —	— — — —
փոխ. կրեդիտ. բանկի. մետաղ. .	146 — — — —	25 — — — —
— — — — թղթաղ. — — — —	100 — — — —	50 — — — —
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	— — — —	— — — —
ընկերութեան օրինակները	100 — — — —	— — — —
Մոսկովայի քաղաք. օրինակները . .	100 — — — —	— — — —
Օրէնսայի — — — —	— — — —	— — — —
Թիֆլիսի — — — —	— — — —	— — — —
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— — — —	— — — —
— — — — փոխառութիւն — — — —	— — — —	— — — —
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը	— — — —	— — — —
խաղաղ է:	— — — —	— — — —

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՆԴՎՈՒՄ ԵՆ

Ֆրանսիական, անգլիական և գերմանական լեզուները

ԲԵՐԼԻՑԻ

Ամերիկական նոր մեթոդով

Որի օգնութեամբ աշակերտները ամենակարճ ժամանակում ազատ կերպով խօսել են սովորում:

Գանձակապ փողոց, տուն Շահնազարովի, № 15. Երրորդ յարկում:

1—5

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Թիֆլիսում ԳԱՆՈՎԱԿԱՅԱՍ փողոցում, տուն Շահնազարովի, № 15, երրորդ յարկ:

1—2

Լոյս տեսաւ և վաճառվում են Թիֆլիսում կենտրոնական գրադաճառանոցում և «Տարադի» խմբագրութեան մէջ, իսկ Շուշի—Աբրահամեանցի գրադաճառանոցում

- 1) Աղա-Մուհամմէդ Շահն Շուշում, գիրք 2 կողմէ:
- 2) Վիշնէլի Թէլլ, Լամարտինի 20 «

Թարգմանութիւն Հ. Առաքելեանի:

ՆՈՐ ՀԻՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Գաղարի կենտրոնում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորած սենեակներ. օրը 60 կոպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСѢ

въ центръ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

25—36

Լոյս տեսաւ և վաճառվում է Շուշի, Աբրահամեանցի գրադաճառանոցում

„ՎԵՐՋԻՆ ՎԵՐՔԵՐ“

պատմ. վէպ, I մաս. հեղինակութիւն Լեօն: Գինը 30 կոպ. Նոյն տեղը վաճառվում է հեղինակի միւս աշխատութիւնները: Գինը. ПУША, Книжный магазинъ А. Аб-рамянца.

4—5

ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՐ ՏԵԼԵԳՐԱԳՐԻ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առեւտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տիպոնների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10%-ից մինչև 120% վաճառվում է եղբայր Գովինսկիների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Թիֆլիս, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք զիջում են վերջին հասցեով՝ С. П. Ма-нуэльянцу.

Գինն է 1 ռուբլի: Փոստի ծախս 21 կ. Գրադաճառներին զիջում կը լինի:

24—150

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի զի-տութիւն հասարակութեան, որ իր գրասենեակում ներկայ տարվայ նոյեմբերի 1-ին տե-ղի կունենայ աճուրդ կապալով տարւո համար 447, 5 քառ. սաժէն գետին երկաթու-ղով բերվող ապրանքների շտեմարան կառուցանելու համար: Գետինը գտնվում է քա-ղաքիս 10-րդ մասում, մաքսատան դիմաց:

3—3

питатель-
ный
Напитокъ

ЧУЧУО

Բաղար նախաւ է միայն 4 կողմ.
Բուրեցական պարտաւորութիւն.
ՄԱՐՏԻՆԻ ՆԻ ՄՆԵՄԱՐ ՓՈՅԻ.
Առաջարկվում է անողջագործներին
և երեխաներին համար.

Միակ պահանջ կապալում է հաստատված գերադրական ապրանքների կով-
կասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բաքուում:

ПИСЬМЫ

ԳԱՅԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՌԻՋՆԵՐ

Պատմ. վէպեր, որոնք իրանք
իրանց են ուղղվում ու օժտւում

Գաղար համար — աճուրդից
— — — — նախկին
— — — — անարարարկից
— — — — կէտնից

Մեծ Սարգսյան փողոց,
24

ՎԵՐՋԻՆ ՎԵՐՔԵՐ

ՍԵՆԵԱԿԱՆ ԿԱՐԿԱՐՈՒՄՆԵՐ

Որի համարներ տարածութեան
վրա.

ՏԵԼԵԳՐԱԳՐԻ ԱՐԿԻՎ

Կէկերովի,
Արմոնիստներ, Կէկերովի
ՇԱՆՔԱՐԿԻՆԵՐ

Նախաձեռնիկներ և ծրագրեր ձեռ-
նար.

ՐՕՏՈՎԵՆ (на Дону)

ВР. ГЛѢБОВИ

Большая Садовая, 24.

ВЫСОЧАЙШЕ
ТОВАРИ-
МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-
УТВЕРЖДЕННОЕ
ЩЕСТВО
ТУННО-ЛИТЕЙНОГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и за-
водскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, бураторовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лес-
ныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобооекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ граблей «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и жѣди.

Выполнение всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, виноку-
рныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножѣзныхъ доро-
жекъ, локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми рабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шутлѣвортъ въ Линколнъ и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континентъ» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ паровозовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ нД. Г. Я. Золотухинъ, Никола-
евскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго учи-
лища кв. № 8.

84—100 (в. 2.)

Երաճարարական Գրադաճառանոց

ԱՐՔԵՏԵԱՆԻ

„Խե-կարպետ“ վէպը 1 ր., „Շուշան ողբերգութիւն“ (օպերայի համար) 1 ր.
Մամուլի տակ է և մինչև նոյեմբերի սկիզբները լոյս կը տեսնի 400—650 յիշ-
գիր երեսներէց բաղկացած

ԱՄՍՍՍ

Վէպը Թիւրքահայերի ՆՈՐԱԳՈՅՆ կենսից: Բաժանորդագրութիւնը շարունակվում է ռուբլի 50 կողմէ լոյս տեսնելուց յետոյ կը լինի:
Օտար քաղաքացիք կարող են զիմել ԲԱԿՍ Թիպոգրաֆիոյ Թեր-Օգանեսյանց.

4—5